ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 հունիսի 2026 թվականի N 894 - Ա

ԱՆԺԱՄԿԵՏ, ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Պետական գույքի կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 17-րդ մասը, 30-րդ հոդվածը, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությանն ամրացված՝ մարզ Կոտայք, համայնք Աբովյան, գյուղ Առինջ, Վ. Տերյան թաղամասի 1-ին փողոց 13 հասցեում գտնվող, 2.40935 հա մակերեսով հողամաս զբաղեցրած, գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականի համար՝ 02102025-07-0029, պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը՝ 02.10.2025 թ., անշարժ գույքի կազմից՝

1) 2609.78 քառակուսի մետր մակերեսով, 254,033,713,59 դրամ հաշվեկշռային արժեքով Բ մասնաշենքն անժամկետ, անհատույց օգտագործման իրավունքով հանձնել «Դեղերի և բժշկական պարագաների ապահովման ազգային կենտրոն»

պետական ոչ առևտրային կազմակերպությանը, պետական գրանցման համար՝ 278.210.03495.

2) 3089.7 քառակուսի մետր մակերեսով, 297,500,199,14 դրամ հաշվեկշռային արժեքով Գ մասնաշենքն անժամկետ, անհատույց օգտագործման իրավունքով հանձնել «Դատաբժշկական գիտագործնական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը, պետական գրանցման համար՝ 273.210.03340.

3) 3244.95 քառակուսի մետր մակերեսով, 329,958,043,00 դրամ հաշվեկշռային արժեքով Դ մասնաշենքն անժամկետ, անհատույց օգտագործման իրավունքով հանձնել «Հանրապետական շտապ օգնության ծառայություն» փակ բաժնետիրական ընկերությանը, պետական գրանցման համար՝ 29.140.00659:

2. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահին և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում ապահովել սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքի հանձնման-ընդունման աշխատանքների կատարումը:

3. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահին՝ ուժի մեջ մտնելուց հետո եռամսյա ժամկետում ապահովել սույն որոշման 1-ին կետում նշված կազմակերպությունների հետ համապատասխան պայմանագրերի կնքումը: Ընդ որում՝ աշխատանքների կատարման արդյունքում առաջացած ծախսերը ենթակա են իրականացման սույն որոշման 1-ին կետում նշված կազմակերպությունների միջոցների հաշվին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

25.06.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ